
	Ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 08.02.2	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

սահմանափակ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	2
ԳԼՈՒԽ 2. ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ) ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	2
ԳԼՈՒԽ 3. ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	3
ԳԼՈՒԽ 4. ՖՈՐՎԱՐԴԱՅԻՆ, ՖՅՈՒՉԵՐՍԱՅԻՆ, ՕՊՑԻՈՆ ԵՎ ՍՎՈՊ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ .....	4
ԳԼՈՒԽ 5. ՆԵՐԲԱՆԿԱՅԻՆ ՕՊՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ .....	5
ԳԼՈՒԽ 6. ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՕՊՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	5
ԳԼՈՒԽ 7. ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՍՎՈՓ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	5
ԳԼՈՒԽ 8. ՆԵՐԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՍՎՈՓ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	6

	Ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 08.02.2	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	


**սահմանափակ**

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1 <Յունիբանկ> բաց բաժնետիրական ընկերության /այսուհետ՝ Բանկ/ ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման կարգը սահմանում է՝ Բանկում ածանցյալ գործիքներով (ֆորվարդային, ֆյուչերսային, օպցիոն, սվոփ պայմանագրեր) գործառնությունների իրականացման ընթացակարգը, այդ գործառնություններն իրականացնող տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև աշխատակիցների իրավասություններն ու պարտականությունները:
- 1.2 Սույն Կարգում փոփոխությունները և լրացումները հաստատվում են Բանկի խորհրդի որոշմամբ:

**ԳԼՈՒԽ 2. ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ (ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ) ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 2.1 Ածանցյալ գործիքներով գործառնությունները կարող են իրականացվել միայն Բանկի Վարչության որոշմամբ, բացառությամբ սվոփ գործարքների, բանկի Ֆինանսական շուկաներում գործառնությունների դեպարտամենտի կողմից:
- 2.2 Բանկն իր հաճախորդների հետ ածանցյալ գործիքներով գործառնությունների պայմանագրեր է կնքում մինչև երեք տարի ժամկետով:
- 2.3 Ածանցյալ գործիքներով գործառնությունների կնքման նվազագույն սահմանաչափ է սահմանվում՝ իրավաբանական անձանց համար - 3.000 ԱՄՆ դոլարին համարժեք արժույթ, ֆիզիկական անձանց համար - 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք արժույթ:
- 2.4 Ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման վերաբերյալ որոշումների կայացումը, ինչպես նաև գործարքի կնքումը կատարվում է բանկի Վարչության նախագահի կամ նրա տեղակալի կողմից, համաձայն խորհրդի կողմից հաստատված սահմանաչափերի:
- 2.5 Ածանցյալ գործիքներով գործառնություններ իրականացնելու դեպքում հաճախորդի համար բանկում բացվում է համապատասխան հաշիվ:
- 2.6 Բանկը հաճախորդի հետ կնքում է պայմանագիր, ինչը հիմք է հանդիսանում համապատասխան հաշվապահական ձևակերպումներով կատարել գործարքը:
- 2.7 Հաշվապահական գրանցումները վարվում և հսկվում են Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտի համապատասխան աշխատակցի կողմից, համաձայն ՀՀ ԿԲ կողմից մշակված ներքին իրավական ակտերի:
- 2.8 Այն դեպքերում, երբ գործարքները ֆիքսվում են SWIFT կամ CBANet համակարգերի միջոցով, դիլերի կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթի հիման վրա, SWIFT համակարգով փոխանցումներ իրականացնող աշխատակիցը, որը չի առնչվում ածանցյալ գործարքների կնքման և հաշվառման հետ, ուղարկվում է գործարքի վերաբերյալ հայտը և ստացվում է գործարքների բոլոր հաստատումները, որից հետո Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտի համապատասխան աշխատակցի կողմից, որը չի առնչվում այդ գործարքների կնքման հետ, ստուգվում և համեմատվում են դիլերների կողմից ներկայացված փաստաթղթերը:
- 2.9 Ածանցյալ գործարքները (բացառությամբ սվոփ գործարքների) հիմնավորվում են մանրամասն օժանդակ փաստաթղթերով, որոնցում ներառվում են գործընկերոջ ֆինանսական վիճակը (ֆինանսական հաշվետվությունները), ֆինանսական շուկայում գործունեության վաղեմությունը, պայմանագրային պարտավորությունների կատարման հնարավորությունների գնահատումը և այլն:

	Ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 08.02.2	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

**սահմանափակ**

**2.10** Հաշվետվությունները ձևավորվում են հաշվետվություններ կազմող Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտի համապատասխան աշխատակցի կողմից:

**2.11** Բանկի ածանցյալ գործիքների գործառնությունների մեջ արտասովոր աճ (5-10%) արտացոլող հաշվետվությունները ուսումնասիրվում և քննարկվում են բանկի Վարչության կողմից՝ հաշվետվությունների համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ:

**2.12** Բանկի Վարչության կամ նրա կողմից նշված համապատասխան մարմնի համար պատրաստվում են շաբաթական հաշվետվություններ, որոնք արտացոլում են շաբաթվա ընթացքում բոլոր ածանցյալ գործիքներով իրականացված գործարքները, բաց դիրքերը շաբաթվա վերջի դրությամբ, չիրացված/չճանաչված եկամուտները և վնասները (բացառությամբ սվոփ գործարքների):

**2.13** Ածանցյալների պորտֆելը վերագնահատվում է փոխարժեքների (գների) յուրաքանչյուր փոփոխման ժամանակ:

**2.14** Ածանցյալ գործիքների առարկան արտարժույթ(ներ) հանդիսանալու դեպքում, վերագնահատումը իրականացվում է համաձայն ՀՀ ԿԲ կողմից սահմանվող միջին փոխարժեքների, իսկ այլ դեպքում վերագնահատման ժամանակ օգտագործվող գները տրամադրվում են դիլերի կողմից, որը չի առնչվում ածանցյալ գործիքներով իրականացվող գործարքների կնքման հետ:

**2.15** Դիլերի առուվաճառքի թիքետները/ պայմանագիրը/ նախորոք համարակալվում են:

**2.16** Առուվաճառքի թիքետը /պայմանագիրը/ներառում է հետևյալ տեղեկատվությունը՝

- գործարքի իրականացման օրը,
- գործարքի տեսակը,
- պայմանագրի պայմանների նկարագրությունը,
- անվանական արժեքը,
- վճարված գինը,
- գործարքի նպատակը,
- դիլերի ստորագրությունը

**2.17** Պայմանագրում նշված ժամկետի լրանալու օրը գործարքից հրաժարվելու դեպքում պատժամիջոցները ձեռնարկվում են համաձայն կնքված պայմանագրի:


**2.18** Հաճախորդը գործարքի ժամկետը խախտելու դեպքում վճարում է տուգանք համաձայն կնքված պայմանագրի:

**ԳԼՈՒԽ 3. ՄԻՋՔԱՆԿԱՅԻՆ ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**3.1** Միջբանկային ածանցյալ գործիքներով գործառնությունները կատարվում են Բանկի և այլ բանկերի միջև, հեռախոսով կամ էլեկտրոնային կապի միջոցով ֆիքսված գործարքների հիման վրա:

**3.2** ՀՀ տարածքում գործող բանկերի հետ գործարքը հեռախոսով ֆիքսելուց հետո, կնքվում է պայմանագիր:


**3.3** Օտարերկրյա (այդ թվում թղթակից) բանկերի հետ Դիլերի կողմից գործարքը հեռախոսով կամ REUTER համակարգի միջոցով ֆիքսվելուց հետո, թիքետը ստորագրվում է Բանկի Վարչության նախագահի կամ նրա տեղակալի կողմից, այնուհետև SWIFT համակարգով փոխանցումներ իրականացնող աշխատակցի կողմից այն բանկին, որի հետ գործարք է ֆիքսվել, էլեկտրոնային կապի միջոցով (SWIFT, FAX) սահմանված կարգով ուղարկվում է գործարքի կատարման հաստատումը, որը ենթակա է պարտադիր կատարման Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտի կողմից:

	Ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 08.02.2	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

սահմանափակ

#### ԳԼՈՒԽ 4. ՖՈՐՎԱՐԴԱՅԻՆ, ՖՅՈՒՉԵՐՍԱՅԻՆ, ՕՊՑԻՈՆ ԵՎ ՍՎՈՊ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

- 4.1** Ֆորվարդային պայմանագիրը կողմերի միջև համաձայնություն է բազիսային ակտիվի ապագա առաքման համար, որը կնքվում է բորսայից դուրս:
- 4.2** Ֆյուչերսային պայմանագիրը կողմերի միջև համաձայնություն է բազիսային ակտիվի ապագա առաքման համար, որը կնքվում է բորսայի ներսում:
- 4.3** Ֆյուչերսային պայմանագրերով իրականացվող գործառնությունները իրականացվում են բորսայական (ֆյուչերսային) հարթակներում՝ բորսայի կողմից սահմանված սահմանաչափերով և բորսայի կողմից նշանակված օրերին:
- 4.4** Բանկի առաջարկի կամ պահանջարկի ներքո, Բանկի կողմից լիազորված անձը կարող է բորսայում գործարքներ իրականացնել Բանկի կողմից սահմանված փոխարժեքներով:
- 4.5** Գործարքը իրականացնելու դեպքում Գործընկեր բանկի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր, որը վավերացնում է Բանկի Վարչության նախագահ կամ տեղակալը:
- 4.6** Բանկի Վարչության նախագահը կամ նրա տեղակալը ստորագրում է գործարքի կատարման կարգադրությունը, որը ենթակա է պարտադիր կատարման Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտի կողմից:
- 4.7** Օպցիոն պայմանագիրը իրավունք է տալիս պարզևավճար վճարող կողմին գնել կամ վաճառել որոշակի գնով և սահմանված քանակով բազիսային ակտիվ:
- 4.8** Օպցիոնի պայմանագրով կողմեր են հանդիսանում օպցիոն գնորդը և վաճառողը, որոնք ունեն տարբեր իրավունքներ և պարտավորություններ:
- 4.9** Օպցիոնի գնորդը իրավունք ունի գնել օպցիոն վաճառողից կամ վաճառել նրան որոշ գումար, համաձայնեցված փոխարժեքով (իրականացման գին), նախօրոք նշանակված օրը կամ որոշ ժամանակահատվածի ընթացքում:
- 4.10** Վաճառողը պարտավոր է տրամադրել գնորդին կամ ընդունել նրանից համաձայնեցված պայմաններով պահանջվող գումարը:
- 4.11** Տարբերվում են օպցիոնի երկու տեսակներ.  
 ա) օպցիոն call  
 բ) օպցիոն put
- 4.12** Օպցիոն call-ի տիրապետողը (գնման օպցիոն) իրավունք ունի վաճառողից գնել որոշակի ակտիվ նշանակված փոխարժեքով կատարման օրը կամ համաձայնեցված ժամանակաշրջանի ընթացքում:
- 4.13** Օպցիոն put-ի տիրապետողն (վաճառքի օպցիոն) իրավունք ունի վաճառել օպցիոն տիրապետողին ակտիվ, նախօրոք համաձայնեցված պայմաններով:
- 4.14** Call և put օպցիոնները կարող են իրականացվել հետևյալ երկու եղանակով.  
 ա) Եվրոպական օպցիոն  
 բ) ամերիկյան օպցիոն
- 4.15** Եվրոպական օպցիոնը կարող է իրականացվել միայն պայմանագրի ավարտի օրը:
- 4.16** Ամերիկյան օպցիոնը կարող է իրականացվել մինչ պայմանագրի ավարտը կամայական օր:
- 4.17** Տարբերվում է Սվոպի երկու տեսակ.  
 ա) Տոկոսային սվոպ  
 բ) Արժուրթային սվոպ

	Ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 08.02.2	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

**սահմանափակ**

**4.18** Տոկոսային սվոպը համաձայնություն է պայմանագիրը կնքող երկու կողմերի միջև փոխհամաձայնեցված որոշակի գումարի գծով պայմանագրում սահմանված պայմաններով ապագայում տարբեր տիպի տոկոսային վճարների (օր. ֆիքսվածը փոփոխվողի դիմաց) փոխանակման մասին:

**4.19** Արժույթային սվոպը համաձայնություն է կողմերի միջև համաձայնեցված փոխարժեքով որոշակի գումարի արժույթի գնման կամ վաճառքի, ապագայի սահմանված ժամկետում նույն գումարով հակառակ գործարքի իրականացման վերաբերյալ:

**ԳԼՈՒԽ 5. ՆԵՐՔԱՆԿԱՅԻՆ ՕՊՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**5.1** Բանկը հաճախորդին վաճառում է կամ հաճախորդից գնում է օպցիոն պայմանագիր, որը իրավունք է տալիս հաճախորդին կապված օպցիոնի ձևից և տեսակից համաձայնեցված փոխարժեքով գնել կամ վաճառել բազիսային ակտիվ:

**5.2** Օպցիոն պայմանագրով գործառնությունների փոխարժեքները ներկայացնում է դիվերը և հաստատում է Բանկի Վարչության նախագահը կամ նրա տեղակալը՝ (Վարչության որոշմամբ այդ իրավասությունն ունենալու դեպքում) ըստ առաջարկի կամ պահանջարկի:

**ԳԼՈՒԽ 6. ՄԻՋՔԱՆԿԱՅԻՆ ՕՊՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**6.1** Բանկն իրականացնում է օպցիոն պայմանագրի առուվաճառք՝ գործընկեր բանկի հետ ըստ առաջարկի կամ պահանջարկի:

**6.2** Ելնելով օպցիոնի ձևից և տեսակից բանկերի միջև կնքվում է համապատասխան պայմանագիր:

**6.3** Բանկի կողմից պայմանագիրը վավերացնում է Բանկի Վարչության նախագահը կամ նրա տեղակալը:

**6.4** Բանկի Վարչության նախագահը կամ նրա տեղակալը ստորագրում է գործարքի կատարման կարգադրությունը, որը ենթակա է պարտադիր կատարման Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտի կողմից:

**ԳԼՈՒԽ 7. ՄԻՋՔԱՆԿԱՅԻՆ ՍՎՈՓ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**


**7.1** Բանկի կողմից միջբանկային սվոփ գործառնությունները կնքվում են հաշվի առնելով տվյալ պահին Բանկի իրացվելիությունը, արտարժույթի ածանցյալ գործառնությունների իրականացման ռազմավարությունը և այլ գործոններ որոնք առնչվում են Բանկի իրացվելիության հետ:

**7.2** Միջբանկային սվոփ գործարքները իրականացվում են բանկի Ֆինանսական շուկաներում գործառնությունների դեպարտամենտի կողմից (այսուհետև Դեպարտամենտ):

**7.3** Գործառնական օրվա ընթացքում Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից Վարչության նախագահին կամ համապատասխան տեղակալին բանավոր կերպով տվյալ պահին շուկայում տիրող իրավիճակի մասին, Բանկի իրացվելիության մասին անհրաժեշտ տեղեկատվություններ ներկայացվելուց, այնուհետև բանավոր համապատասխան որոշում կայացնելուց հետո դեպարտամենտի կողմից իրականացվում են միջբանկային սվոփ գործառնություններ:

**7.4** Միջբանկային սվոփ գործառնությունները իրականացվում են Բանկի և այլ բանկերի միջև կնքված պայմանագրերի, հեռախոսով կամ էլեկտրոնային կապի միջոցով ֆիքսված գործարքների հիման վրա:

**7.5** ՀՀ տարածքում գործող բանկերի հետ գործարքը հեռախոսով ֆիքսելուց հետո երկկողմանի կնքվում է համապատասխան սվոփ պայմանագիր: Գործարքը կարող է իրականացվել նաև CBANet

	Ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 08.02.2	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

**սահմանափակ**

համակարգի միջոցով բանկերի համապատասխան ստորաբաժանումների կողմից ուղարկվող հայտի և հայտի հաստատման հիման վրա: Հայտը կամ հայտի հաստատումը, սվոփ պայմանագիրը, Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից ստուգանշվելուց հետո, ստորագրվում և կնքվում է Վարչության նախագահի կամ համապատասխան տեղակալի կողմից: Այնուհետև դեպարտամենտի կողմից Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտին համապատասխան փաստաթղթերի ներկայացումից հետո, վերջիններիս կողմից իրականացվում են միջոցների փոխանցումները ինչպես նաև համապատասխան ձևակերպումները:

**7.6** Օտարերկրյա (այդ թվում՝ թղթակից) բանկերի հետ դեպարտամենտի կողմից սվոփ գործարքները հեռախոսով կամ REUTERS համակարգով ֆիքսելուց հետո, Դեպարտամենտի համապատասխան աշխատակցի կողմից կազմվում է թիքեթ, այնուհետև Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից ստուգանշվելուց հետո, ստորագրվում և կնքվում է Վարչության նախագահի կամ համապատասխան տեղակալի կողմից: Որից հետո ներկայացվում է Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտին վերջիններիս կողմից էլեկտրոնային կապի միջոցով (SWIFT, FAX և այլն) սահմանված կարգով գործարքների կատարման հաստատումների ուղարկելը, միջոցների փոխանցումները ինչպես նաև համապատասխան ձևակերպումները իրականացնելու նպատակով:

**7.7** Դեպարտամենտի կողմից սույն գործարքի վերաբերյալ 06 հաշվետվություն է ներկայացվում ՀՀ ԿԲ 4/03 կանոնակարգի համապատասխան:

**ԳԼՈՒԽ 8. ՆԵՐԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՍՎՈՓ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**8.1** Բանկի կողմից ներբանկային և ֆինանսական կազմակերպությունների հետ սվոփ գործառնությունները կնքվում են սույն կարգի Գլուխ 7-ի դրույթներին համապատասխան: